ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

# *ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲՈՒՀԵՐԻ ՀԱՄԱՐ*

*Սույն ուղեցույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հասանելի բուհական կրթություն» ծրագրի շրջանակներում:*

*Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Գործընկերություն և ուսուցում» հասարակական կազմակերպությունը և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:*

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀԿ
PARTNERSHIP & TEACHING NGO

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**1. Ներածություն------------------------------------------------------------------------3**

**2. Ակադեմիական հայտարարությունների շրջանառման ուղեցույց----------4-13**

**3. Ամառային դպրոցի մասին հայտարարություն կազմելու ուղեցույց------14-19**

**4. Ասպիրանտուրայի ընդունելության հայտարարություն կազմելու ուղեցույց-------------------------------------------------------------------------------------------20-26**

**5. Մագիստրոսական կրթական ծրագրերի վերաբերյալ հայտարարություն կազմելու ուղեցույց-------------------------------------------------------------27-33**

### ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- Հավելված 1. Ամառային դպրոցի մասին հայտարարության նմուշ-օրինակ-------34-37
- Հավելված 2. Ասպիրանտուրայի ընդունելության հայտարարության նմուշ-օրինակ------------------------------------------------------------------------------------------------------38-41
- Հավելված 3. Մագիստրոսական կրթական ծրագրերի վերաբերյալ հայտարարության օրինակելի նմուշ---------------------------------------------------------------------------42-47

## 1. Ներածություն

Սույն ուղեցույցի մշակումը նպատակ ունի բարելավելու բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթաթոշակների և ֆինանսական աջակցության քաղաքականությունը՝ նպաստելով բարձրագույն կրթության հասանելիությանը:

Ուղեցույցի ներդրումը բուհերում կնպաստի կրթաթոշակների և ֆինանսական աջակցության քաղաքականության գործընթացն ավելի բաց և թափանցիկ դարձնելուն:

Ուղեցույցը մշակվել է «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից իրականացված «Հասանելի բուհական կրթություն» ծրագրի շրջանակներում ընտրված փորձագետի կողմից: Ուղեցույցը մշակելիս փորձագետը հաշվի է առել ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի 3 բարձրագույն ուսումնական հաստատություններում (Գորիսի պետական համալսարան, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղ, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Սիսիանի մասնաճյուղ) իրականացված կրթաթոշակների և ֆինանսական աջակցության քաղաքականության մոնիտորինգի արդյունքները, ինչպես նաև այդ քաղաքականության բարելավման նպատակով շահագրգիռ կողմերի մասնակցությամբ իրականացված մարզային ֆորումի արդյունքում հավաքագրված առաջարկությունները:

Սույն փաստաթուղթը ներառում է կրթաթոշակների և կրթական այլ հնարավորությունների մասին հայտարարություններ ստեղծելու և դրանք հնարավորինս լայն շրջանառելու վերաբերյալ ուղեցույց և հայտարարությունների ձևանմուշներ:

Ուղեցույցը նախատեսված է Սյունիքի մարզի բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Որպես ուղեցույցի հավելվածներ կցվում են տեղական և միջազգային կրթաթոշակների, ամառային դպրոցների, կրթական փոխանակման ծրագրերի միջազգային և տեղական գիտաժողովների մասնակցության, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու ֆինանսական աջակցության հնարավորությունների վերաբերյալ հայտարարությունների ձևանմուշներ: Ուղեցույցում մանրամասն նկարագրված են այդ ձևանմուշների կիրառման և տարածման մեխանիզմները:

## 2. Ակադեմիական հայտարարությունների շրջանառման ուղեցույց

Ակաեմիական կամ գիտական հայտարարությունը ներկայացնում է որևէ գիտական միջոցառում կամ հնարավորություն:

Ակադեմիական հայտարարությունները տարածվում են համալսարանների, պետական մարմինների, ակադեմիական հաստատությունների, ասոցիացիաների, ուսումնական և հետազոտական կենտրոնների, հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև անհատների կողմից (ինչպես, օրինակ, անհատական կամ ընտանեկան կրթաթոշակները):

Ակադեմիական հայտարարությունները դիտարկվում են որպես գիտական ինստիտուտի բովանդակային այցեքարտի տարրեր, ըստ այդմ՝ որքան թափանցիկ և պարզ կերպով է մատուցվում ակադեմիական հայտարարությունը, այնքան շահում է այն տարածող գիտական կառույցը:

Յուրաքանչյուր համալսարան, կրթական հաստատություն և գիտահետազոտական կենտրոն պարտավոր է իր կառույցում առկա գիտակրթական՝ ակադեմիական հնարավորությունների վերաբերյալ մանրամասն գրված հայտարարությունները զետեղել իր կայքում, ինչպես նաև՝ հնարավորինս լայն շրջանակների հասնելու նպատակով, շրջանառել այդ հայտարարությունները բազմաթիվ այլ ռեսուրսներով:

Սույն ուղեցույցի առաջին հատվածում ներկայացվում են ակադեմիական հայտարարությունների բազմաթիվ հնարավոր տեսակներ, որոնք ներկայումս ողջ աշխարհում շրջանառվում են գիտակրթական հաստատությունների կողմից:

Այնուհետև կներկայացվեն գիտակրթական հայտարարությունները շրջանառելու արդյունավետ մեխանիզմները:

Ուղեցույցի վերջում կներկայացվի մագիստրոսական, ասպիրանտական և ամառային դպրոցների հայտարարությունների տեքստերը գրելու ամբողջական ուղեցույց՝ նմուշներով:

Ակադեմիական հայտարարությունների տեսակները:

**Բակալավրի ուսումնական ծրագրերի հայտարարություն**

Բակալավրիատի հայտարարությունները համալսարանների ամենակարևոր և առավել խթանվող հայտարարություններից են: Որոշ համալսարանների դեպքում բակալավրիատի ուսումնական ծրագրերը շահույթի գոյացման հիմնական կամ միակ աղբյուրն են, ըստ այդմ՝ բակալավրիատի ուսումնական ծրագրերի հայտարարությունների պատրաստումն ու տարածումը համալսարանի կարևոր մարքեթինգային քայլերից են: Բակալավրի ուսումնական ծրագրերը կարող են հայտարարվել մասնագիտական ուղղվածության անվանումով, օրինակ, Իրավագիտության բակալավրի աստիճան, Արվեստաբանության բակալավրի աստիճան և այլն:

**Մագիստրոսական ծրագրերի հայտարարություն**

Մագիստրոսական ծրագրերը հայտարարվում են համալսարանների, հետազոտական կենտրոնների, ակադեմիական ինստիտուտների կողմից՝ առաջարկելով մագիստրոսական դասընթացներ, որոնց արդյունքում սովորողները ձեռք են բերում մագիստրոսի գիտական աստիճան: Հաճախ մագիստրոսական ծրագրերը հայտարարվում են կրթաթոշակի հետ միասին և հայտարարությունը կազմվում է այնպես, որ տեսանելի լինի նաև կրթաթոշակի տրամադրման մասին տեղեկատվությունը: Համալսարանների և հետազոտական կնետրոնների համար շատ կարևոր է մագիստրոսական ծրագրերի հայտարարությունների գրագետ կազմումն ու տարածումը:

**Ասպիրատնուրայի (PhD) հայտարարություն**

Բոլոր հետազոտական համալսարաններն ու ակադեմիական հաստատությունները կանոնավոր կերպով հայտարարում են ասպիրանտուրայի կրթական ծրագրերի մասին: Նման հայտարարություններում ներկայացվում են ասպիրանտական հետազոտության մանրամասները՝ հիմնականում կենտրոնանալով համապատասխանության չափանիշների և դիմորդներին ներկայացվող պահանջների վրա: Ասպիրանտուրայի հայտարարությունները որպես կանոն տեղադրվում են կրթաթոշակի հայտարարության հետ մեկտեղ, օրինակ, ԱՄՆ-ում գրեթե բոլոր ասպիրանտական ծրագրերով ուսանողները ստանում են ամբողջական աջակցություն կրթաթոշակի կամ ֆինանսական օժանդակության տեսքով: Այս բոլոր մանրամասները պետք է նշված լինեն ասպիրանտական ծրագրի հայտարարությունում և պետք է լայնորեն տարածվեն ողջ աշխարհից լավագույն դիմորդներին ներգրավելու նպատակով:

**Դրամաշնորհների հայտարարություններ**

Ակադեմիական հայտարարությունների շարքում դրամաշնորհներն իրենց ուրույն տեղն ունեն: Դրամաշնորհները կարող են հայտարարվել հիմնադրամների, պետական գործակալությունների կողմից՝ որպես դիմորդներ դիտարկելով համալսարաններին և հետազոտական ինստիտուտներին, կամ հայտարարվել նույն գործակալությունների, հիմնադրամների և համալսարանների կողմից՝ նախատեսված լինելով անհատ դիմորդների համար:

**Կրթաթոշակների (Scholarship) հայտարարություններ**

Կրթաթոշակները հայտարարվում են համալսարանների, ֆակուլտետների, հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև անհատների կողմից՝ աջակցելու բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի ուսանողներին, ինչպես նաև հետազոտողներին՝ ուսանելու կամ հետազոտություն իրականացնելու հարցում: Կրթաթոշակների մասին հայտարարությունները սովորաբար ներկայացվում են բակալավրիատի, մագիստրատուրայի կամ ասպիրանտուրայի հայտարարությունների հետ մեկտեղ՝ նշելով, որ կրթաթոշակը կտրամադրվի այն դիմորդներին, ովքեր համալսարանում անցնելու են հստակ գիտական աստիճանի կուրս: Այս ամենից բացի, բազում եզակի կրթաթոշակների հայտարարություններ են կազմվում և տարածվում որպես առանձին և անկախ կրթաթոշակի հնարավորություններ: Կրթաթոշակների պարագայում հետաքրքիր է, որ ցանկացած կազմակերպություն կարող է կրթաթոշակային ծրագիր կազմել և հայտարարել տարբեր ոլորտների սովորողներին և հետազոտողներին աջակցելու համար: Օրինակ, որևէ բանկ կարող է կրթաթոշակ

հայտարարել որևէ երկրում կամ համալսարանում ուսանող երկրորդ կուրսի ուսանողներին աջակցելու համար, կամ ՏՏ ոլորտի որևէ կազմակերպություն կարող է կրթաթոշակ տրամադրել տաղանդավոր ուսանողներին ծրագրավորում ուսումնասիրելու համար:

### Կրթաթոշակների (Fellowship) հայտարարություն

Այս կրթաթոշակների հայտարարությունները նկարագրում են հստակ դրամական կամ ոչ դրամական աջակցությամբ հաստիքի մասին որոշակի համալսարանի, ֆակուլտետի, գրադարանի ներսում, որը նպատակ ունի աջակցել հետազոտողներին կամ ուսանողներին հետազոտություններ և ուսումնասիրություններ կատարելու հարցում: Նմանատիպ կրթաթոշակները հայտարարվում են համալսարանների կամ մեծ ակադեմիական հաստատությունների կողմից, ինչպիսիք են ԴԱԱԴ-ն, Ամերիկյան խորհուրդները և այլն:

### Հետդոկտորական հետազոտություն կամ դասավանդման հնարավորություններ

Ասպիրանտական թեզը պաշտպանելուց հետո թեկնածուները փնտրում են հետդոկտորական հնարավորություններ՝ որպես անցումային փուլ, մինչև պրոֆեսորի գիտական աստիճան ստանալը: Համալսարաններն ու հետազոտական կենտրոնները հայտարարում են հետդոկտորական ծրագրերի մասին իրենց կայքերում՝ հրավիրելով նորավարտ ասպիրանտներին իրենց համայնքի անդամ դառնալ: Հետդոկտորական դրամաշնորհները և կրթաթոշակները կարող են հայտարարվել նաև ակադեմիական հիմնադրամների կողմից հետազոտական կենտրոնների և համալսարանների համար: Նման հիմնադրամներ են, օրինակ, Էնդրյու Մելլոն հիմնադրամը, Լեվերհյուլմ Թրասթը և այլն:

### Գիտաժողովների հայտադիմումների ընդունման մասին հայտարարություն

Որոշ դեպքերում գիտաժողով, համաժողով, կոնվենցիա, աշխատանքային քննարկում, սիմպոզիում տերմինները կարող են փոխարինաբար օգտագործվել հայտարարելու համար ակադեմիական միջոցառման մասին, որի ժամանակ գիտնականներն ու հետազոտողները հավաքվում են՝ ներկայացնելու իրենց հետազոտական տիրույթում արված հայտնագործություններն ու նորամուծությունները: Գիտաժողովների հայտարարությունները, որոնք հրավիրում են հետազոտողներին և ուսանողներին դիմելու, կոչվում են «Հայտադիմումների ընդունման մասին հայտարարություններ»: Նմանատիպ հայտարարությունները պետք է տարածվեն դիմելու վերջնաժամկետից ամիսներ առաջ, որպեսզի ակադեմիական համայնքի անդամները բավականաչափ ժամանակ ունենան պատրաստվելու և դիմելու:

### Գիտաժողովների ծրագրեր

Գիտաժողովների ծրագրերը տարածվում են գիտաժողովի մասնակիցների միջև, ինչպես նաև հրապարակվում են տարբեր կայքերում՝ տեղեկացնելով ելույթների թեմաների, տևողության և այն ներկայացնող անձի մասին: Նմանատիպ հայտարարությունները անհրաժեշտ է տարածել բոլոր հնարավոր հարթակներով հնարավորինս մեծ լսարան ներգրավելու նպատակով:

**Ամառային դպրոց**

Ամառային դպրոցը մեկից ութ շաբաթ տևողությամբ ակադեմիական միջոցառում է, որը նպատակ է հետապնդում որևէ գիտական թեմայի ավելի խորացված ուսումնասիրություն անցկացնել կամ մասնակիցներին կարճ ժամանակում փոխանցել ինչ-որ նոր թեմայի մասին գիտելիքներ: Ամառային դպրոցը նմանատիպ միջոցառումների ընդհանրացված անվանում է, նույնիսկ եթե տվյալ միջոցառումը անցկացվում է ձմռանը, աշնանը կամ գարնանը, չնայած ձմեռային դպրոց, աշնանային դպրոց կամ գարնանային դպրոց հասկացությունները նույնպես օգտագործվում են:

**Դասախոսության մասին հայտարարություն**

Ֆակուլտետները և համալսարանները կանոնավոր կերպով կազմակերպում են դասախոսություններ, որոնք կարող են բաց լինել հասարակության համար կամ նախատեսված լինել միայն տվյալ ֆակուլտետի անդամների և ուսանողների համար: Դասախոսությունների մասին հայտարարությունները հրապարակվում են կայքերում կամ ուղարկվում են նամակագրական ցանկերի միջոցով դասախոսությունից մի քանի օր առաջ: Եթե դասախոսությունը կազմակերպվում է մեկի կողմից, ով տվյալ ֆակուլտետի անդամ չէ, ապա այն կոչվում է «Հյուրընկալված դասախոսություն»: Որոշ դեպքերում դասախոսությունների շարքերը կարող են նշանավոր գիտնականի/հետազոտողի անուն կրել:

**Հանդիպում-քննարկումների մասին հայտարարություն**

Հանդիպումները և քննարկումները կամ կլոր սեղանները ընդունված ակադեմիական միջոցառումներ են ֆակուլտետի կամ այլ ակադեմիական ինստիտուտների ներսում, թեժ քննարկման առարկա հանդիացող որևէ հարցի շուրջ: Նմանատիպ հայտարարությունները ներկայացնում են քննարկման թեման, միջոցառման մասնակիցների անուններն ու տիտղոսները: Հայտարարությունը սովորաբար տարածվում է հանդիպումից մի քանի օր առաջ:

**Դասընթաց/վերապատրաստում**

Դասընթացների հայտարարությունները ներկայացնում են դասընթացի թեման և այն անցկացնող դասընթացավարին՝ ավելի մեծ թվով մասնակիցների ներգրավելու նպատակով, ովքեր կվճարեն իրենց մասնակցության համար: Դասընթացների հայտարարությունները սովորաբար տարածվում են դասընթացից մեկ ամիս շուտ և նշում են դիմելու վերջնաժամկետը: Դասընթացի մասնակիցները, որպես կանոն, ստանում են մասնակցության վկայականներ:

**Թափուր հաստիքներ**

Թափուր հաստիքների մասին հայտարարում են ֆակուլտետները, ինստիտուտները, դպրոցները, համալսարանների այլ ադմինիստրատիվ ստորաբաժանումներ, ինչպես նաև այլ գիտական հաստատությունները: Գիտական թափուր հաստիքի մասին

հայտարարությունները մանրամասն նկարագրում են աշխատակցին ներկայացվող պահանջներն ու պարտականությունները, նշում են դիմելու վերջնաժամկետ: Նմանատիպ հայտարարությունները պետք է տեղադրվեն ֆակուլտետների կամ ամբիոնների կայքերում, և/կամ այլ կայքերում, որոնք մասնագիտացված են թափուր հաստիքների մասին հայտարարությունների տարածման հարցում:

**Պրակտիկա**

Պրակտիկայի հայտարարությունները երբեմն կարող են ակադեմիական հայտարարությունների մաս կազմել: Պրակտիկայի հնարավորության մասին հայտարարում են պետական մարմինները, հետազոտական կենտրոնները և այլ կառույցներ, վերջերս ուսումն ավարտած ուսանողներին գիտական ուղղվածության աշխատանքի հնարավորություն տալով՝ հետագայում նրանց աշխատանքի առաջարկ ներկայացնելու նպատակով:

**Քայլեր, որոնք կխթանեն ակադեմիական հայտարարությունների տարածումն ու արդյունքում հնարավորություն կտան ներգրավել հնարավորինս շատ ուսանողներ և հետազոտողներ:**

**1. Գրե՛ք ակադեմիական հայտարարության տեքստ, որը կներառի բոլոր մանրամասները:**

Ակադեմիական հայտարարությունը պետք է սկսել ներկայացուցչական վերնագրով: Լինի այն գիտաժողովի, կամ ասպիրանտական ծրագրի, կամ կրթաթոշակի հայտարարություն վերնագիրը պետք է սկսել՝ ներկայացնելով, թե ինչ հայտարարություն է այն ու այնուհետև հայտարարություն է, ապա հայտարարության վերնագիրը պետք է պարունակի ակադեմիական հնարավորության կամ միջոցառման անվանումը, կազմակերպող հաստատության անվանումը, վայրը և ամսաթվերը:

Վերնագրից հետո մի քանի պարբերությամբ պետք է գրել, թե ինչի վերաբերյալ է տվյալ ակադեմիական հնարավորությունը կամ միջոցառումը և հատկապես ում համար է այն նախատեսված:

Պետք է նշել հայտադիմումների ընդունման վերջնաժամկետը և դրանց ստացման տարբերակը (էլ. փոստ, առցանց լրացվող հայտադիմում), ինչպես նաև այն կարևոր ժամկետները, որոնք վերաբերում են տվյալ հայտարարությանը, օրինակ, երբ կապ կհաստատվի դիմորդների հետ մասնակցության հաստատման նպատակով:

Այս ուղեցույցի վերջում ավելի մանրամասն ներկայացվում է ասպիրանտական, մագիստրոսական և ամառային դպրոցների հայտարարությունների տեքստերի ամբողջական օրինակները և դրանք գրելու կարգը:

**2. Հրապարակե՛ք հայտարարությունը կայքում**

Երբ վերևում թվարկված կետերով փաստաթուղթը պատրաստ է, հրապարակեք այն առցանց: Հնարավոր է, որ ձեր ընկերությունը, ամբիոնը, ֆակուլտետը, ՀԿ-ն կամ հիմնադրամը չունի կայք: Եթե դուք համալսարանի կազմում եք, ապա կարող եք խնդրել համալսարանի համապատասխան պաշտոնյաներին հրապարակել կոնֆերանսի հայտարարությունը իրենց պաշտոնական կայքում: Եթե այդպես չէ, և կոնֆերանսը չի կազմակերպվում որևէ մեծ կառույցի կողմից և դուք չունեք կայք, ապա կարող եք գտնել համագործակցող ակադեմիական կայք և հրապարակել հայտարարությունն այնտեղ:

Ի վերջո, մի ստեղծեք բլոգ կամ կայք միայն մեկ հայտարարություն շրջանառելու համար: Նոր բացված կայքը կամ բլոգը, որն ունի միայն մեկ հրապարակում կարող կասկածելի և անլուրջ երևալ: Այսպիսով, եթե դուք կայք չունեք, ապա միշտ ավելի լավ տարբերակ է օգտագործել այլ ակադեմիական հարթակներ հայտարարությունը շրջանառելու համար:

Հրապարակված հայտարարության ամենակարևոր հատվածը վերնագիրն է: Ձեր ընտրած վերնագիրը խոսելու է ակադեմիական հնարավորության կամ միջոցառման մասին և ընդգծելու է այն ցանկացած պահի, երբ դուք կիսվեք այդ հղմամբ սոցիալական ցանցերում, ինչպիսին են օրինակ, Facebook-ը կամ Twitter-ը:

Կարևոր է նաև այնպիսի վերնագրի ընտրությունը, որը անմիջապես ուշադրություն կգրավի և կտեղեկացնի ընթերցողին այն մասին, թե ինչպիսի հայտարարություն է ինքը պատրաստվում կարդալ:

**3. Ակադեմիական հայտարարության ձևաչափը (երբեք մի օգտագործեք PDF կամ JPG ֆորմատներ)**

Երբեք, երբեք, երբեք մի նախագծեք ակադեմիական հայտարարությունները պաստառի, PDF փաստաթղթի, JPEG կամ PNG ֆորմատի նկարների տեսքով:

Ակադեմիական հայտարարություններ շրջանառող կառույցների և անհատների ամենատարածված սխալներից մեկն այն է, որ նրանք պատրաստում են գեղեցիկ պաստառներ գեղեցիկ պատկերներով և տեղադրում հայտարարության ողջ տեքստը տվյալ պաստառում, այնուհետև առցանց հրապարակում են պաստառը կամ ուղարկում են այն էլ. փոստով որպես PDF կամ JPEG ֆայլ:

Երբեք այդպես մի արեք:

Ինչու՞:

Որովհետև, երբ ակադեմիական հայտարարությունը տարածում եք որպես նկար կամ PDF փաստաթուղթ, այլ նմանատիպ կայքերի համար շատ դժվար է դառնում իրենց էջերում տվյալ հայտարարության տարածումը:

Այլ կայքերի խմբագիրները չեն կարող պատճենել JPEG կամ PNG ձևաչափով պաստառի տեքստը, առանց նիշերի օպտիկական ճանաչման ծրագիր օգտագործելու, որպեսզի կարողանան հստակեցնել տեքստը և խմբագրումից հետո այն հրապարակել իրենց կայքում:

Երբ հայտարարությունը տարածվում է որպես նկար, այն չի կարող հասանելի լինել հիմնական որոնողական համակարգերի համար, ինչպիսիք են Google-ը և Bing-ը: Այսպիսով,

երբ շահագրգիռ կողմերը փնտրում են համապատասխան բառեր, տվյալ հայտարարությունը գտնելու համար նրանք ոչ մի արդյունք չեն ստանա և հնարավորություն չեն ունենա կարդալու ձեր ակադեմիական հնարավորության կամ միջոցառման հայտադիմումների ընդունման մասին հայտարարությունը, քանի որ դուք այն հրապարակել եք որպես պատկեր:

Ավելին, երբ դուք չունեք ձեր հայտարարության տեքստային տարբերակը և ուղարկում եք այն էլեկտրոնային փոստով, ուղղակի էլ. փոստի հաղորդագրությունը բացելու և հայտարարությունը կարդալու փոխարեն, այն ստացողները պետք է բացեն կից ֆայլը, պահպանեն այն իրենց համակարգչում և միայն դրանից հետո կարողանան կարդալ այն:

Չափից շատ աշխատանք է պահանջում:

Այնպես որ, խնդրում ենք հետևել կանոնին: Ձեր հայտարարության տեքստը օգտագործեք որպես հաղորդման փոխանցման հիմնական միջոց, իսկ մյուս կից ֆայլերը, օրինակ, պաստառ կամ PDF փաստաթուղթ, կարող են լինել միայն երկրորդական միջոց տեքստին ուղեկցող նպատակով:

Տեքստը ամենակարևորն է:

### 4. Դիմումների ընդունման պարզեցված համակարգ. երբեք մի օգտագործեք PDF ֆորմատով հայտադիմումի ձև

Բազմաթիվ ակադեմիական հնարավորությունների ու միջոցառումների համար հայտադիմումները ստանալու ընդունված տարբերակը էլ. փոստով հայտադիմումների ստացումն է:

Որպես կանոն, հայտարարության տեքստում նշվում է էլ. փոստի հասցե և առաջարկվում է ուղարկել հայտադիմումները, երբեմն նաև ռեզյումե՝ տվյալ էլ. փոստի հասցեով:

Բազմաթիվ այլ դեպքերում օգտագործվում են առցանց հայտադիմումների ձևեր կազմակերպող կառույցի կայքէջում կամ ակադեմիական հայտարարությունների տարածման մասնագիտացված կայքերում:

Երբեք մի օգտագործեք առանձին հայտադիմումի ձև հայտարարության հետ:

Ուսանողները, գիտնականներն ու հետազոտողները հակված չեն լրացնելու նմանատիպ հայտադիմումներ:

Առավել տարօրինակ է, երբ դիմումի ձևը կցվում է PDF ձևաչափով, որը լրացնելու համար անհրաժեշտ է այն բացել PDF ֆայլում փոփոխություն թույլատրող գործիքով, ինչը հասանելի չէ գիտաժողովի հավանական դիմորդների մեծ մասի համար:

Այսպիսով, մի օգտագործեք առանձին դիմումի ձև և եթե նույնիսկ օգտագործում եք, երբեք մի ընտրեք PDF ձևաչափը:

Հայտադիմումներ ստանալու նախընտրելի տարբերակը առցանց համակարգի ինտեգրումն է կայքէջում:

Հիշե՛ք, որքան հեշտ է գործընթացը, այնքան ավելի լավ:

## 5. Տարածեք ակադեմիական հայտարարությունը էլ. փոստի նամակագրական ցուցակներով (mailing lists)

Էլ. փոստի նամակագրական ցուցակները ակադեմիական հայտարարությունները շրջանառելու լավագույն միջոցներից մեկն են:

Հազարավոր նամակագրական ցուցակներ կան: Յուրաքանչյուր ակադեմիական ոլորտ կարող է ունենալ մինչև հարյուր ակադեմիական ասոցիացիաներ, որոնք միավորում են տվյալ ոլորտի գիտնականներին:

Հիմնականում ակադեմիական ասոցիացիաները նամակագրության ցանկ են ունենում, համապատասխան տեղեկատվությունը իրենց բաժանորդներին փոխանցելու նպատակով:

Կարիք չկա նշելու, որ տվյալ ոլորտի համալսարանական ստորաբաժանումները, տարբեր գիտահետազոտական ինստիտուտները և այլ ակադեմիական համայնքներ նույնպես կարող են ունենալ իրենց նամակագրական ցանկերը:

Եթե դուք զբաղվում եք ակադեմիական գործունեությամբ, ապա դուք պետք է իմանաք ձեր ոլորտի նամակագրական ցանկերը: Բաժանորդագրվեք դրանց:

Դրանք միշտ անվճար են և սովորաբար խրախուսվում է հայտարարություն տարածել այդ ցանկերով: Երբեմն ձեր գրառումը կարող է հրապարակվել միայն ադմինիստրատորի հաստատումից հետո: Երբ այն հաստատվում է, ցանցի բոլոր բաժանորդները ստանում են ձեր էլ. փոստ հաղորդագրությունը:

Իսկ ինչպե՞ս հաղորդագրություն ուղարկել տվյալ նամակագրական ցանկերի բաժանորդներին:

Նախքան ուղարկման գործընթացը սկսելը, դուք արդեն պետք է ունենաք որևէ կայքէջում հրապարակված ակադեմիական հայտարարությունը համապատասխան վերնագրով: Բացի այդ, դուք կարող եք ունենալ հայտարարության թարգմանված տարբերակները, ինչպես նաև pdf և որոշ նկարներ կամ պաստառներ:

Սկզբում, նամակի հաղորդագրության թեմա դաշտում տեղադրեք Ձեր հայտարարության վերնագիրը: Պատճենեք Ձեր հայտարարության տեքստը և տեղադրեք այն էլ. նամակի տեքստային շարադրանքի հատվածում:

Շատ տարածված սխալ է, երբ ակադեմիական միջոցառման կամ հնարավորության կազմակերպիչները պարզապես մի քանի տող նամակ են գրում՝ նշելով ակադեմիական հնարավորության կամ միջոցառման մի քանի մանրամասներ, որից հետո հայցում են ընթերցողին մանրամասն տեղեկությունների համար բեռնել կից փաստաթուղթը կամ այցելել կայք:

Խորհուրդ չի տրվում այդպես անել:

Էլ. հաղորդագրության միջոցով ուղարկեք հայտարարության ամբողջական տեքստը, այլապես Դուք հարկադրում եք Ձեր ընթերցողին կատարել մի քանի ավելի գործողություն. բեռնել ֆայլը, բացել այն և այլն, կամ այցելել կայք, որը նույնպես հավելյալ քայլ է: Ակադեմիական հայտարարությանը ծանոթանալը պետք է պարզ գործընթաց լինի:

Շատ ինտերնետ օգտատերեր կասկածամիտ են կից փաստաթղթեր բեռնելու կամ անծանոթ կայք այցելելու հարցերում: Այսպիսով, եթե ուզում եք, որ հնարավորինս մեծ թվով մարդիկ տեսնեն հայտարարությունը, կարդան և հետաքրքրվեն դրանով, ուղարկեք հայտարարության ամբողջական տեքստը էլ. նամակի տեքստի տեսքով, տեղադրեք

հայտարարության կայքի հղումը հաղորդագրության վերջում և կցեք այլ անհրաժեշտ նյութերը՝ որպես հավելումներ:

### 6. Խնդրեք ձեր ոլորտի գիտական հանրությանը շրջանառել ձեր ակադեմիական հայտարարությունները:

Եթե շրջանառում եք որևէ բնագավառի ակադեմիական հայտարարություն, ապա ենթադրվում է, որ դուք ունեք տվյալ ոլորտի ակադեմիական կապեր և ունեք բազում գործընկերներ այլ նմանատիպ հաստատություններում ամբողջ աշխարհում: Կապ հաստատեք նրանց հետ, ուղարկեք հայտադիմումների ընդունման հայտարարությունը էլ. հաղորդագրության տեքստային հատվածում և խնդրեք հրապարակել այն իրենց համալսարանի կայքում:

Դուք կարող եք նույն խնդրանքով դիմել նաև այլ գիտնականների, ում չեք ճանաչում, բայց աշխատում են նույն ոլորտում:

Բազմաթիվ բլոգներ, ամսագրեր և այլ համապատասխան կայքեր կան՝ որոնց հետ կարելի է կապ հաստատել և խնդրել, որ շրջանառեն հայտարարությունը: Կապ հաստատեք նրանց հետ և խնդրեք հրապարակել հայտադիմումների ընդունման հայտարարությունը իրենց կայքում:

### 7. Օգտագործեք սոցցանցերը ակադեմիական հայտարարությունները շրջանառելու նպատակով

Արդյո՞ք ձեր կառույցն ունի Facebook էջ կամ խումբ կամ Twitter-ի հաշիվ:

Այս երկու սոցցանցերի հարթակներն ամենաարդյունավետն են աշխատում ակադեմիական հայտարարությունները շրջանառելու համար:

Եթե դուք ունեք դրանցից մեկը, շատ լավ, իսկ եթե ոչ, ապա բացեք հաշիվ, և սկսեք կիսվել ձեր կառույցի, համալսարանի կամ ինստիտուտի մասին հրապարակումներով:

Այլ հրապարակումների շարքում կիսվեք նաև ակադեմիական հայտարարություններով:

Twitter-ում նշեք (tag) այլ գործընկեր կառույցներին, մարդկանց, ֆակուլտետների՝ նրանց ուշադրությունը գրավելու նպատակով: Նաև խնդրեք նրանց կիսվել ձեր հրապարակմամբ:

Եթե Դուք գեղեցիկ լուսանկարներ անելու որոշակի հմտություններ ունեք, ապա ստեղծեք մի քանի հետաքրքիր լուսանկար և ակադեմիական հայտարարությանը զուգահեռ կիսվեք դրանցով:

Facebook-ում մի շարք խմբեր կան, որոնք լուրջ ակադեմիական համայնքներ են խմբավորում: Որոնեք համապատասխան բանալի բառերով, գտեք այդ խմբերը ֆեյսբուքում և օգտագործեք տվյալ խմբերը ձեր հայտարարությունը այնտեղ հրապարակելու համար:

Խնդրեք ձեր ընկերներին կիսվել գիտաժողովի հայտադիմումների ընդունման մասին հայտարարությամբ իրենց էջում և անձնական հաշիվներում:

*Մարդիկ ոչ միշտ են պատրաստակամ լուրջ և ակադեմիական բովանդակության նկատմամբ, մեծամասնությունը կկիսվի ասույթներ պարունակող ծաղիկների, մայրամուտի նկարներով, կամ քաղաքական գործիչների ելույթներով՝ ձեր ակադեմիական*

*հայտարարությամբ կիսվելու փոխարեն: Այնուամենայնիվ, խնդրեք նաև նրանց և երբեք մի կորցրեք մարդկանց նկատմամբ հավատը:*

**8. Ուղարկե՛ք ակադեմիական հայտարարությունը բոլոր լրատվամիջոցներին**

Ակադեմիական հայտարարության ամբողջական տեքստն ու կից նկարներն ուղարկեք բոլոր լրատվամիջոցների էլ. փոստի հասցեներին: Լրատվամիջոցներից շատերը կհրապարակեն ակադեմիական հայտարարության տեքստն իրենց կայքերում և կշրջանառեն իրենց սոցիալական ցանցերով: Արդյունքում՝ ավելի մեծ թվով դիմորդներ տեղեկացված կլինեն հնարավորությունների ու միջոցառումների մասին:

**9. Վճարովի ծառայություններ**

Կան բազմաթիվ մասնավոր ընկերություններ և առցանց կայքեր, որոնք մասնագիտացած են ակադեմիական հայտարարություններ շրջանառելու և դրան զուգահեռ նաև դիմումներ ընդունելու համակարգ տրամադրելու մեջ:

Օգտագործեք այս ռեսուրսները, հրապարակեք Ձեր հայտարարությունը նմանատիպ վճարովի հարթակներում: Նրանք գիտեն՝ ինչ են անում: Այս կայքերը թիրախավորված լսարան ունեն և, հավանաբար, Ձեր հավանական դիմորդներից մեկը կամ մի քանիսը նմանատիպ կայքերի լսարանի անդամ են:

Նման կայքերը կառաջարկեն հայտադիմումների առցանց համակարգ, ինչն ակադեմիական հնարավորությանը կամ միջոցառմանը դիմելու գործն ավելի է հեշտացնում և ստիպված չեք լինի հայտադիմումներ ստանալ էլեկտրոնային փոստով, այնուհետև ստեղծել Excel ֆայլ և ներմուծել բոլոր դիմորդների տվյալներն այնտեղ:

Նման հարթակներից որոշներն անվճար են, որոշները՝ վճարովի: Ուսումնասիրեք այս հարթակներն ու, եթե դրանց լսարանը համապատասխանում է ձեր շրջանառած ակադեմիական հայտարարությունով հետաքրքրվողների թիրախային խմբին, ապա նաև պատրաստ եղեք վճարել ու հայտարարությունը շրջանառել նաև այդ հարթակներով:
Նմանատիպ հարթակներից են՝ Sqore.com, studyqa.com, heysuccess.com, goabroad.com, armacad.info, h-net.org և այլն:

## 3. Ամառային դպրոցի հայտարարություն մշակելու և տարածելու վերաբերյալ ուղեցույց

*Պետք է հաշվի առնել, որ այս ուղեցույցում բովանդակային մասը, այսինքն՝ որպես օրինակ ներկայացվող ամառային դպրոցի հայտարարությունը, պարզապես նմուշ-օրինակ է և կարող է իրականության հետ չունենալ որևէ աղերս:*

Ամառային դպրոցի մասին հայտարարությունը պարտադիր է հրապարակել ամառային դպրոցի կազմակերպման օրից առնվազն 6 ամիս առաջ, ընդ որում մինչև վերջնաժամկետ՝ առնվազն 3 ամիս ժամանակ տրամադրելով: Միշտ նախընտրելի է ամառային դպրոցի հայտարարությունը հրապարակել անգլերեն (այլ օտար լեզուներով) և հայերեն, քանի որ իրականում բոլոր ամառային դպրոցները կարող են լինել միջազգային, եթե հայտարարության տեքստը գրվի անգլերենով և այլ օտար լեզուներով:

- ✓ **Ամառային դպրոցի վերնագիրը**

Անգլերենով վերնագիրը պետք է սկսվի Summer School արտահայտությամբ: Այս հատվածին պետք է հաջորդի ամառային դպրոցի անվանումը, այնուհետև անցկացման ամսաթվերը, որից հետո վայրը՝ քաղաք, երկիր: Ամառային դպրոցի վերնագրի օրինակելի տարբերակը հետևյալ տեսքը կունենա՝ **Summer School - Armenia and Georgia: neighbours and partners. Historical past, friendly present and economic future, 19-29 June, 2020, Yerevan, Armenia.**

- ✓ **Ամառային դպրոցի հայտարարության տեքստը**

Հայտարարության տեքստը պետք է սկսվի գեղեցիկ ձևավորված վերնագրով, ամսաթվերով և կազմակերպման վայրով:

Ինչպես օրինակ՝ International Summer School
Armenia and Georgia: neighbours and partners. Historical past, friendly present and economic future

19-29 June, 2019

Department of International Relations and Diplomacy

Yerevanian University

Yerevan, Armenia

Այս հատվածից հետո պետք է ներառել տեքստային մասը այն մասին, թե ովքեր են այլ կազմակերպիչները և հովանավորները: Տվյալ տեքստը սովորաբար ունենում է հետևյալ տեսքը.

**The Department of International Relations and Diplomacy, Yerevanian University in collaboration with the The Faculty of Political and Social Sciences, Tbilisian University are organising an international summer school entitled "Armenia and Georgia: neighbours and partners. Historical past, friendly present and economic future" on the problems of common future and the shared present of Armenia and Georgia.**

**The summer school will be held in June 19-29, 2020.**

**Venue: Yerevanian University, Yerevan, Armenia.**

Այնուհետև 3-5 պարբերության շրջանակներում պետք է ներկայացնել ինչո՞ւ է կազմակերպվում տվյալ ամառային դպրոցը, որոնք են առկա խնդիրները, ի՞նչ է տեղի ունենում թեմայի շուրջ ընդհանուր առմամբ և այլն: Օրինակ՝

**Once, just several decades ago, Armenia and Georgia were sharing common economy, military, education system and other means of governmental integrity. Prior to that, these two neighbouring nations and people, were sharing wars and peace, food and culture, buildings and nature.**

**Being a part of Soviet Union, Iran, Ottoman Turkey and during other periods as independent states these two countries with their ethnic, linguistic and cultural diversity and uniqueness still preserve the elements of common economic heritage.**

**The Armeno-Georgian economical domain covers not only the territories of the two countries but also comprises the economic interests of Russia, Turkey, Iran, Azerbaijan, Central Asian countries, European Union and the USA. With this huge domain to study and research economic theorists and international relations professionals have dilemmas to solve and questions to answer.**

**The summer school will address and seek to answer mainly to the following questions:**

**What are the main principles of economic unity and diversity in Armeno-Georgian area?**

**How and in what capacity the economic interactions are taking place?**

**How it was and how is it now? What is the economic future of the region? What are the modes of peaceful coexistence of different economic entities and units?**

Այնուհետև պետք է ներկայացնել, թե ովքեր հատկապես կարող են մասնակցել ամառային դպրոցին.

**Students and scholars from any international academic institution at least 18 years old are invited to apply to this summer school.**

Այնուհետև պետք է մանրամասնել, թե ինչ ավելի մասնավոր թեմաների շուրջ է կենտրոնանալու ամառային դպրոցն ու հատկապես ինչ հետաքրքրություններ նախընտրելի կլինի, որ մասնակիցներն ունենան, օրինակ՝

**It is preferable that the research interests of the participants of the summer school be related to all aspects of economics and diplomacy in the mentioned geographic area, including:**

**1. Economies and infrastructures;**
**2. History of economic integrity of the region;**
**3. Money flows, banks and banking;**
**4. Armenia and Georgia as a Bridge between East and West;**
**5. Economic and Political Problems and Challenges, Geopolitics of the Armeno-Georgian Region: Interdisciplinary Approach;**
**6. Solar Energy and Nuclear Energy;**
**7. Economics of the Caspian Region;**
**8. Turkey-Georgia-Azerbaijan vs. Iran-Armenia or is there any versus;**
**9. The Political Future of the Region.**

Ամառային դպրոցի հայտերի ընդունումը պետք է կազմակերպել առցանց, կամ էլեկտրոնային փոստով ստանալու միջոցով: Այս հատվածում պետք է մանրամասն ներկայացնել, թե ինչպես և երբ է անհրաժեշտ ուղարկել հայտերն ու ինչ փաստաթղթեր են պահանջվում: Եթե ամառային դպրոցը վճարովի է, ապա հայտադիմումը պետք է լինի հնարավորինս կարճ, քանի որ վճարովի ամառային դպրոցների պարագայում մրցակցություն գրեթե չի լինում, և բոլոր նրանք, ովքեր կարող են վճարել, կարող են մասնակցել: Եթե ամառային դպրոցն ամբողջությամբ կամ մասամբ փակում է անհրաժեշտ ծախսերն, ապա կարելի է հայտադիմումում ավելի շատ հարցերի պատասխաններ ակնկալել:

Պետք է հստակ նշել հայտերի ընդունման վերջնաժամկետի մասին, եթե հայտերն ընդունվում են email-ով, ապա պետք է գրել այդ email հասցեն, իսկ եթե հայտերն ընդունվում են որևէ առցանց համակարգի միջոցով, ապա պետք է նշել այդ մասին ու բացատրել, թե ինչ քայլեր է հարկավոր անել հայտը ներկայացնելու համար: Սովորաբար հայտի հետ անհրաժեշտ է լինում կցել CV, ինչի մասին նույնպես

պետք է գրել տեքստում: Այնուհետև պետք է նշել, թե երբ դիմողները կտեղեկացվեն հայտի ընդունման կամ մերժման մասին և անպայման պետք է դիմողներին տեղեկացնել մինչև այդ ամսաթիվը: Նաև, email-ով յուրաքանչյուր հայտը ստանալուց հետո, պետք է տվյալ դիմողին անմիջապես պատասխանել, որ հայտը ստացվել է: Եթե դիմումներն ընդունվում են որևէ առցանց համակարգի միջոցով, ապա հայտը ստանալու մասին ավտոմատ նամակ կուղարկվի դիմողին: Եթե ամառային դպրոցը վճարովի է, ապա անհրաժեշտ է գրել նաև վճարի չափի ու այն փոխանցելու մանրամասների մասին:

Օրինակ՝

**DEADLINE: March 15, 2020.**

**A brief CV including contact details is to be included in the message.**

**A notification about acceptance of the papers will be sent by April 15, 2019.**

**To apply, please send a short motivation letter as well as a CV to summerschool@yerevanianuniversity.am email address.**

Պետք է նաև նշել, թե որն է լինելու ամառային դպրոցի աշխատանքային լեզուն, կամ լեզուները:

**The working language of the summer school is English.**

Ամենակարևոր հարցերից մեկը մասնակիցներին ֆինանսական աջակցություն տրամադրելու հարցն է: Եթե ամառային դպրոցի կազմակերպիչներն ունենալու են համապատասխան ֆինանսական միջոցներ, որով կարողանալու են ծածկել որոշ մասնակիցների ճանապարհածախսն ու բնակության ծախսերն, ապա այդ մասին պետք է նշել:

**For the scholars and students coming from the region there will be limited funding to cover some travel expenses and accommodation costs.**

Եթե արդեն հայտնի են ամառային դպրոցին մասնակցող հայտնի գիտնականների անուններ, ովքեր արդեն ամառային դպրոցի հայտարարությունն ուղարկելուց առաջ, ձեր խնդրանքի հիման վրա համաձայնել են մասնակցել ամառային դպրոցին որպես դասավանդողներ, ապա կարող եք տեքստում նշել բոլոր այդ հայտնի գիտնականների անուններն ու քաղաքները կամ համալսարանները, որտեղից նրանք գալու են:

**Speakers:**

**Prof. Dr. Varuj Varujyan (Yerevan), Prof. Dr. Stephan Stephanson (Leiden), Prof. Dr. Lazaro Lazarino (Venice), Prof. Dr. Gert Bertner (Vienna), Prof. Dr.**

**Abdula Abdulayev (Makhachkala), Prof. Dr. Shako Shakoashvili (Tbilisi), Prof. Dr. Barth Barthner (Vienna), Prof. Dr. Igor Igorev (St. Petersburg), Prof. Dr. Vrej Vrejyan (Yerevan), Dr. Ali Alisari (Tehran), Prof. Dr. John Johnson (Harvard), Prof. Dr. Swen Thissen (Munich), Prof. Dr. Sharon Sharonson (Berkley), Prof. Dr. Inga Peterssen (Rouen), Prof. Dr. Ragnar Ragnarson (Copenhagen), Prof. Dr. David Coperfield (Venice)**

Այս հայտարարության մեջ կարևոր է մասնակիցներին տեղեկացնել, թե որ երկրի քաղաքացիների համար է ՀՀ մուտքի համար վիզա անհրաժեշտ և ինչ պետք է անեն վիզա ստանալու համար: Նաև պետք է նշել կամ հղում տալ այն երկրների ցանկը, որոնց քաղաքացիների համար վիզա անհրաժեշտ չէ, ինչպես նաև նշել այն երկրների ցանկը, որոնց քաղաքացիներին վիզա ստանալու համար անհրաժեշտ է հատուկ հրավեր:

**Armenian Visa:**

**For the citizens of Belarus, Georgia, Kazakhstan, Kyrgyzstan, Moldova,Russia, Tajikistan, Ukraine and Uzbekistan no visa is required. The citizens of the mentioned countries can enter Armenia without any invitation.**

**For the citizens of European and American countries, Australia and Iran as well no visa is required. No special invitation is required.**

Վիզայի մասին ավելի մանրամասն տեղեկություն տրամադրելու համար կարող եք տրամադրել ԱԳՆ համապատասխան կայքի հղումն ու տվյալներ:

**For more information on Armenian visa please visit:**
**http://www.mfa.am/en/visa/**

Միջազգային ամառային դպրոցները սովորաբար ունենում են մասնակցության վճար, որի մասին պետք է նախօրոք նշել հայտարարության տեքստում: Ամառային դպրոցի կազմակերպիչները կարող են որոշ երկրների մասնակիցներին ազատել մասնակցության վճար վճարելուց և այդ մասին նշել տեքստում:

**Participation fee:**

**The summer school participation fee is 700 Euros and reduced rate of 300 Euros for postgraduate students.**

**Participants from the Caucasus and Central Asia will only pay 100 Euro.**

Եթե ամառային դպրոցի կազմակերպիչները հնարավորություն ունեն մասնակցիներին հատկացնել կացարան, ապա այդ մասին պետք է գրել տեքստում: Եթե նման հնարավորություն չկա, ապա սովորաբար կազմակերպիչները պայմանավորվում են մի քանի հյուրանոցների հետ, որ այդ հյուրանոցները ամառային դպրոցի մասնակիցներին զեղչեր տրամադրեն և այդ հյուրանոցների հղումները տեղադրվում են հայտարարության տեքստում՝ խորհուրդ տալով մասնակիցներին սենյակներ պատվիրել այդ հյուրանոցներում: Եթե ամառային դպրոցի մասնակիցները հոգալու են նաև սնունդի և սուրճի ընդմիջումների հետ կապված ծախսերը, ապա այդ մասին նույնպես պետք է նշել: Հնարավոր է ամառային

դպրոցի կազմակերպիչները նաև դիմավորեն մասնակիցներին օդակայանում, այդ մասին նույնպես պետք է նշել հայտարարության մեջ:

**Accommodation and meals:**

**The Organizing Committee of the summer school will try to help all the participants with accommodation for the days of the summer school. More information about this will appear in the next Circulars. Two coffee breaks will be possible during the summer school days. For the first and the last days of the summer school respective banquets will be given for the participants free of charge.**

Եթե նախատեսվում են էքսկուրսիաներ, ապա այդ մասին կարելի է նշել առանձին պարբերությամբ:

**Excursions**

**Two small excursion will be organised for the participants. It is planned to visit the pagan temple of Garni, the Geghard monastery as well as Ejmiatsin.**

Վերջում պետք է գրել հիմնական կազմակերպչի անունը:

**For any further information do not hesitate to contact:**
**Dr. Kazmakerpich Kazmakerpichyan,**
**Secretary of the Organizing Committee**
**armeniageorgia@yu.am**
**Yerevanian University**

- ✓ **Նկար**

Յուրաքանչյուր ամառային դպրոցի համար պետք է ստեղծել առանձին նկար: Նկարներ ստեղծելու համար կան համապատասխան օնլայն համակարգեր, օրինակ, canva.com: Նկարի չափսը պետք է լինի 990x490:

***Արդյունքում կունենանք հետևյալ տեսքով հայտարարություն /Տես հավելված 1/:***

Արդեն պատրաստի հայտարարությունը տարածելու համար խնդրում եմ կարդալ հետևյալ ուղեցույցը. https://blog.armacad.info/8-steps-to-promote-an-academic-summer school-call-for-papers

**4. Ասպիրանտուրայի ընդունելության հայտարարություն կազմելու ուղեցույց**

*Պետք է հաշվի առնել, որ այս ուղեցույցում բովանդակային մասը, այսինքն՝ որպես օրինակ ներկայացվող ամառային դպրոցի հայտարարությունը, պարզապես նմուշ-օրինակ է և կարող է իրականության հետ չունենալ որևէ աղերս:*

Հայաստանի Հանրապետության բուհերից ոչ մեկը չի տրամադրում ասպիրանտուրայի ընդունելության հայտարարություն, որտեղ քայլ առ քայլ կնշվեն հայտերի ներկայացման կարգը, վերջնաժամկետները, տվյալ ամբիոնի հնարավորություններն ու հնարավոր դիմորդներին տրամադրվող առավելություններն ու առկա կրթաթոշակները:

Բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի հայտարարությունները բուհերի համար ուսանողներ ներգրավելու լավագույն մարքեթինգային գործիքներն են:

Ասպիրանտական կրթություն առաջարկող բուհերի բոլոր ամբիոնները պետք է ունենան նման հայտարարություն: Այս հայտարարության առկայությամբ հեշտանում է դիմորդ-բուհ կապը և առավելագույնս խթանվում է տվյալ բուհի առաջխաղացումը տեղական և միջազգային շուկայում: Եթե յուրաքանչյուր ամբիոն իր մոտ առկա բոլոր մասնագիտությունների գծով առանձին կամ բոլոր մասնագիտությունների համար մեկ հայտարարությամբ հանդես կգա որպես ասպիրանտական կրթության տրամադրող, ապա միայն այդ դեպքում բուհը կկարողանա ներգրավել նաև բազմաթիվ միջազգային ուսանողների՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ:

Ներքևում որպես օրինակ ներկայացվում է ասպիրանտուրայի հայտարարության հնարավոր բազմաթիվ տարբերակներից միայն մեկը: Տեսականորեն հնարավոր է մեկ հայտարարության մեջ համատեղել առկա, հեռակա ասպիրանտուրայի մասին տվյալները, ինչպես նաև հայցորդի համար հնարավորությունները և ինչպես նշեցի վերը, կարելի է յուրաքանչյուրի առաջարկի համար գրել առանձին հայտարարություն:

Ասպիրանտուրայի մասին հայտարարությունը պետք է շրջանառության մեջ դրվի ասպիրանտուրայի ծրագրի սկզբից առնվազն 11 ամիս առաջ և տրամադրել առնվազն 6 ամիս մինչև վերջնաժամկետը:

Ենթադրվում է, որ յուրաքանչյուր ֆակուլտետի յուրաքանչյուր ամբիոն կարող է ընդունել ասպիրանտների և կազմակերպել ասպիրանտական ուսուցում, ինչպես նաև կազմակերպել տվյալ ասպիրանտի պաշտպանությունը համապատասխան մասնագիտական խորհուրդներից որևէ մեկում: Ընդ որում յուրաքանչյուր ֆակուլտետի ամբիոնի կողմից կարող է շրջանառվել մի քանի ասպիրանտական թեմայի կամ ծրագրի հայտարարություն:

Այժմ որպես օրինակ դիտարկենք ենթադրյալ Երևանի սոցիալական համալսարանի Պատմության ֆակուլտետի «Հայաստանի հարակից երկրների

պատմության» ամբիոնի կողմից հայտարարվող ասպիրանտական տեղերի ընդհանուր հայտարարությունը, որին կարող են դիմել համապատասխան որակավորում ունեցող բոլոր ցանկացողները:
Նախընտրելի է, որ այս հայտարարությունը հայերենին զուգահեռ շրջանառվի նաև անգլերեն լեզվով, որպես օրինակ այստեղ ներկայացնում ենք անգլերեն տարբերակը, քանի որ յուրաքանչյուր ասպիրանտական տեղի համար, այն լավ շրջանառելու պարագայում, դիմելու են տարբեր երկրների ուսանողներ՝ ավելացնելով համալսարանի ուսանողների թիվը:

Ասպիրանտուրայի հայտարարությունը պետք է սկսել տվյալ ծրագրի/թեմայի գեղեցիկ վերնագրով:

**PhD program 2018 - Department of the History of Armenia's Neighboring Countries, Faculty of History, Yerevan Social University, Armenia.**

Այնուհետև պետք է նկարագրել, թե ինչի մասին է տվյալ հայտարարությունը, ով է առաջարկում տվյալ ասպիրանտական տեղը, որ ժամանակաշրջանների վերաբերյալ է տվյալ առաջարկը, երբ է սկսվելու ծրագիրը և թե երբ է դիմելու վերջնաժամկետը, քանի տարի է տևելու առկա և/կամ հեռակա ուսուցումը և արդյունքում ինչ աստիճանի է արժանանալու պաշտպանողը:

Department of the History of Armenia's Neighboring Countries, Faculty of History, Yerevan Social University, Armenia is announcing its PhD program in the fields of the history of Armenia’s neighboring countries with a focus on Ancient, Medieval and Modern times. The program starts on September 1 every year and the deadline to apply for the 2018 class is May 15, 2018. The program lasts 3 years for full time and 4 years for part times studies and after successfully completing all exams leads to a thesis defence and doctoral degree.

Այս հատվածից հետո պետք է առնվազն 3 պարբերությամբ մոտ 400 բառի շրջանակներում ներկայացնել, թե ինչ թեմաների շուրջ է կազմակերպվում տվյալ ծրագիրը, թե ինչ փորձառություն ունի տվյալ ամբիոնը այս ոլորտի ուսումնասիրության գործում և թե որոնք են հիմնական թեմաները, որոնց ուսումնասիրությամբ կարող են զբաղվել տվյալ ամբիոնի ասպիրանտներն ու աշխատակիցները:

The Department of the History of Armenia's Neighboring Countries at Yerevan Social University is internationally recognized for its excellent research and education capabilities, its impact on Middle Eastern and Caucasian Studies in general and in the fields of historical research and studies of the vibrant region in particular. The department focuses on studies and research of historical realities from ancient till early modern times and has strong academic capabilities to conduct and lead further research with international academic partners and students. More than 30 professors and 20 PhD students are engaged in academic research at the Department of the History of Armenia's Neighboring Countries,

ready to share their knowledge and expertise with new fellow students and researchers. The department has established very strong ties with other departments at the Yerevan Social Universities as well as other Universities and research centers in Armenia and beyond. Accordingly interdisciplinary approaches and topics are welcome to be offered by prospective PhD students.

Prospective PhD students at the Department of History of Armenia's Neighboring Countries are expected to have a solid academic training and background in Historical studies, Archaeology, Armenian Studies, Cultural Studies, Caucasian Studies, Middle Eastern Studies, Iranian Studies, Turkish Studies, Georgian Studies, Central Asian Studies, Medieval Studies, Political Studies, and any other relevant field. Prospective students must have at least an MA or equal degree or above by September 1, 2018. So current MA students who will get their MA degree in 2018 are welcome to apply.

PhD students are expected to master and write a PhD thesis in the scope of (but not limited) the following topics:

1. Historical realities of Armenia’s neighbouring countries, territories, entities, people from Ancient times till early modern times with a slight focus on Armenia in any historical development time (Armenian, Iranian, Urartian, Akkadian, Mesopotamian, Georgian, Arabian, Turkish, Greek, Russian, Mongol, Byzantine, Roman, Kurdish, Caucasian, etc. studies from the perspective of history, culture, archaeology, textual studies, etc.)
2. Diplomatic and political realities from ancient till early modern times (Roman-Iranian, Iranian-Armenian, Byzantine-Iranian, Byzantine-Roman, Byzantine-Arabic, Arabic-Iranian, Turkish-Russian, Iranian-Russian, Georgian- or any other configuration in any given period of history).
3. Religion and religious studies in the historical perspective
4. Culture and cultural studies in the historical perspective
5. Any other relevant topic which will fit to the expertise of our professors.

Այս հատվածից հետո պետք է գրել, թե դիմողները ինչ պահանջների պետք է համապատասխանեն, ինչ լեզուների պետք է տիրապետեն, որ երկրներից կարող են դիմել, կա՞ արդյոք տարիքային սահմանափակում, թե չկա, պե՞տք է արդյոք ունենան նախկինում գրված հոդվածներ, թե չպետք է ունենան և այլն: Այս հատվածը սովորաբար տեքստում վերնագրվում է Eligibility անվանումով:

ELIGIBILITY

All classes in the Department of History of Armenia's Neighboring Countries will be conducted in Armenian, thus all prospective students are required to have an excellent knowledge of Armenian. Also an excellent command of English as well as one of the regional languages new or old, such as Georgian (or any other Caucasian language), Russian, Turkish (or any of the languages of the Turkic family spread in the Caucasus or Central Asia), Persian (or any other Iranian language spread in the region), Grabar, Old Persian, Old Georgian, Akkadian, Urartian, Sumerian, Assyrian, etc is required.

It will be considered as an advantage if the applicants also prove a working knowledge of French or German or Russian.

All applicants must have at least an MA or equal or higher degree at the moment of the start of the PhD program. No minimal GPA is a requirement for this particular program.

This program is open to all international applicants from any country of the world. Students of any nationality are welcome to apply and become a PhD student at the Department of the History of Armenia's Neighboring Countries at Yerevan Social University.

Այս հատվածից հետո պետք է գրել, թե ինչ է պետք դիմելու համար, ինչպես են դիմում, ինչ փաստաթղթեր են ներկայացնում, եթե կան պարտադիր քննություններ, ապա ինչպես է պետք դրանք հանձնել, եթե կա հարցազրույց, ապա ինչպես է պետք այդ հարցազրույցին մասնակցել՝ սքայփով, թե վայբերով: Այստեղ պետք է նշել, որ ասպիրանտ դառնալու համար անհրաժեշտ է ներկայացնել թեմայի նկարագիր՝ առավելագույնը 1200 բառի սահմաններում (research proposal), ինչպես նաև հենց Հայաստանի տվյալ համալսարանի տվյալ ամբիոնում սովորելու ցանկությունը հիմնավորող՝ առավելագույնը 600 բառի սահմաններում շարադրանք (statement of purpose): Այս երկու փաստաթղթերը շատ կարևոր են և հիմնականում սրանց հիման վրա է իրականացվում ընդունելության որոշումը:

